

ՀԱՅ ԾԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐԻ ԴԵՐԸ ԲԱՔՈՒ ՔԱՂԱՔԻ
ԾԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՐՊԱՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ
Տեր-Մինասյան Ա. (ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ, Հայաստան)
anoush_arch@hotmail.com

Բանալի բառեր՝ ճարտարապետություն, քաղաք, կերպար, շենք, հորինվածք, միջավայր:

Ինչպես հայտնի է, ճարտարապետության զարգացումը մշտապես կապված է երկրի տնտեսական վիճակի հետ: XIX դ. վերջին և XX դ. սկզբին տնտեսության բուռն աճով պայմանավորված՝ Բաքվում արագ տեմպերով զարգանում է քաղաքաշինությունը, իսկ դրա հետ կապված՝ նաև ծավալային ճարտարապետությունը. բնակելի, հասարակական և արդյունաբերական շենքերի կառուցումը: Քաղաքի բնակչությունը նույնպես կտրուկ աճում է, և գոյություն ունեցող հայ համայնքը համալրվում է Արցախից, Սյունիքից, ինչպես նաև Պարսկաստանից և այլ վայրերից գաղթած հայերով: Հետզհետե համայնքի ներկայացուցիչներն ամրապնդվում են իրենց դիրքերում, ինտեգրվում բազմազգ հասարակությանը և շատ ակտիվ մասնակցում քաղաքային կյանքի, արդյունաբերության և մշակույթի զարգացման գործին:

Այդ ժամանակաշրջանում բազմաթիվ հայ տաղանդավոր երիտասարդներ մեկնում էին Ռուսաստանի ամենահայտնի մասնագիտական հաստատություններում ուսում ստանալու: Գիտելիքներով զինված վերադառնալով՝ նրանք իրենց կարողություններն ու գաղափարները ներդնում էին տարբեր ասպարեզներում, այդ թվում՝ մեծ չափով, Բաքվի կառուցապատման գործում:

Հայտնի է, որ ցանկացած քաղաքի ընկալման համար ամենակարևոր գործոններից մեկն է նրա գեղարվեստական կերպարը,

որը ստեղծվում է ճարտարապետական բաղադրիչներով: Այսպիսով, Բաքվի՝ եվրոպական քաղաք հիշեցնող գովերգված կերպարն այլազգի ճարտարապետների շարքում կերտվել է նաև հայ ճարտարապետների մի ողջ աստղաբույլի շնորհիվ: Դրանց թվում են հայտնի ճարտարապետներ Գ. Տեր-Միքելյանը (Տեր-Միքելովը), Ն. Բաևը, Վ. Սարգիսովը, Հ. Քաջազնունին (որի անունը գրված է Հայաստանի պատմության մեջ ոչ միայն որպես ճարտարապետ, այլև՝ որպես Հայաստանի առաջին Հանրապետության վարչապետ), Ֆ. Աղայանը, Մ. Տեր-Գրիգորյանցը, Ա. Կանդինյանը և ուրիշներ:

Ռուսաստանում (հիմնականում՝ Սանկտ-Պետերբուրգում) ուսումնասիրելով դարաշրջանի նոր ոճերը՝ հայ ճարտարապետները կարողացան դրանք կիրառել նորովի, յուրահատուկ կերպով՝ ստեղծելով Բաքվի ճարտարապետական այն հմայիչ կերպարը, որն այսօր համարվում է դասական: Նրանցից մեկը հայտնի ճարտարապետ Գաբրիել Տեր-Միքելյանն է, որի ստեղծագործական ձեռագիրը հստակորեն երևում է Բաքվի շատ նշանավոր շենքերում: Գ. Տեր-Միքելյանի նախագծերով են կառուցված Բաքվի քաղաքային վարչության հիմնական շենքի ճակատային մասը, հասարակական ակումբի շենքը (այժմ՝ Ադրբեջանի ազգային ֆիլհարմոնիա), ծննդատունը (1899 թ.), Թիֆլիսի առևտրական բանկի Բաքվի բաժանմունքի շենքը, (1902-1903 թթ.), Առևտրի ուսումնարանը (1905-1910 թթ.):

Բաքվի կառուցապատման գործում մեծ է ճարտարապետներ Ն. Բաևի և Վ. Սարգիսովի ներդրումը: Հիշատակության է արժանի, որ 1911-1918 թթ. Բաևը եղել է Բաքվի գլխավոր ճարտարագետը: Նրա նախագծերով Բաքվում կառուցվել են Մաիլովների թատրոնի հանրահայտ շենքը (այժմ՝ Բաքվի օպերայի և բալետի թատրոն), հիվանդանոցային ավանը (19 լազարեթ՝ 24 մասնաշենքով), մի շարք դպրոցներ, գիմնազիա, բնակելի տներ, երկաթուղու Սաբունչի

կայարանը, Սեմաշկոյի անվան վիրաբուժական հիվանդանոցը, ինչպես նաև հայերի՝ բնակելի Արմենիքենդ թաղամասը, որը նրա անունով էլ կոչվել է «Բաևի»: Վ. Սարգիսովի նախագծերով նավթագործների բանավանում կառուցվել են բազմաթիվ բնակելի շենքեր: Այս մեծանուն ճարտարապետների աշխատանքը շարունակեցին կրտսեր սերնդի ներկայացուցիչները, որոնց թվում մեծ է ճարտարապետ Մարտին Թովմասյանի և մյուսների ներդրումը:

Այսօր այս բոլոր շենքերը (կամ նրանց մեծամասնությունը) շարունակում են զարդարել Բաքու քաղաքը՝ պահպանելով երբեմնի բազմազգ քաղաքի յուրահատուկ փայլը և հոգևոր այն իմաստն ու շունչը, որ այլոց թվում նրան հաղորդել են նաև հայ ճարտարապետների մի քանի սերունդներ:

THE ROLE OF ARMENIAN ARCHITECTS IN THE FORMATION OF ARCHITECTURAL
IMAGE OF CITY BAKU

Ter-Minasyan A. (National Academy of Sciences of the Republic of Armenia, Institute of Arts,
Armenia)